Վահան Հովհաննիսյան

/07. 03. 19/

Սեռը՝ արական

Տարիքը՝ 41- 55

Ընդհանուր աշխատանքային ստաժը՝ 25, որից՝ իրավաբանը՝ 20

Փաստաբանական ստաժը՝ 8

Եթե խոսենք օրենսդրական բացերի մասին, կարծում եմ օրենսդրական բաց չկա։ Քրեական դատավարության օրենսգիրքը շատ լավ կարգավորում է այդ հարցը, և ես ոչ թե կնշեի օրենսդրական բացը, այլ նախաքննական մարմնի լիազորական հայեցողությունը, որը հիմնականում ի նպաստ մեղադրյալի չի լինում։ Այսինքն՝ հիմնականում որոշում են ներկայացնել որպես խափանման միջոց կալանքը։ Օրենսդրական բաց այս առումով ես չեմ տեսնում։ Այսինքն՝ քննիչը կարող է ներկայացնել, կարող է չներկայացնել։

Խափանման միջոցները նշված են քրեական դատավարության օրենսգրքում, ես հենց անհատապես թվարկելու կարիքը չեմ տեսնում։ Եթե պետք է կարող եմ թվարկել։

Ախր, լավ և վատ որակական ցուցանիշներով գնահատել չեմ կարող. ամեն մեկն էլ իր նպատակային նշանակությունն ունի։ Կիրառվում է ըստ որոշակի քրեական գործի և ըստ որոշակի հանգամանքների։ Ընդհանուր առմամբ կան որոշակի խափանման միջոցներ, որոնք այլ երկրներում կիրառվում են, Հայաստանի Հանրապետությունում չկան։ Կցանկանայի, որ դրանք ներառվեին և այդ ուղղությամբ։ Ես գիտեմ, որ աշխատանքներ տարվում են, ընդհուպ մինչև պիլոտային ծրագրեր կան։ Օրինակ՝ տնային կալանքի մասին է խոսքը, որը սահմանափակում է անձի ազատությունը, այսինքն, ըստ էության, ձևական առումով նման է խափանման միջոց

կալանքին, բայց բովանդակային առումով ավելի նվազ խիստ է և նպատակ է հետապնդում սահմանափակել անձի ազատությունը մինչև իր տնային սահմաններով։ Դա հենց տեխնիկական խնդիրների հետ կապված է, որը առայժմ միայն պիլոտային ծրագիր է ներդրված, և կոնկրետ ժամանակահատվածը ես չեմ կարող ասել, սակայն որքան գիտեմ, առաջիկա մեկ տարվա ընթացքում պետք է, որ արդեն քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ իրականացվեն և տնային կալանքը, որպես խափանման միջոց, կիրառվելու է, խափանման միջոցների տեսակների մեջ։

Իմ կարծիքով, եթե նախաքննական մարմիններն ու դատարանները գործեն օրինականության սահմաններում, հարցը ոչ թե խափանման միջոցներն են, այլ խափանման միջոցների վերաբերյալ կոնկրետ ատյանի ունեցած վերաբերմունքը։ Եթե օրինականության սահմաններում գործեն, ես կարծում եմ, որ եղած խափանման միջոցները բավական են։

Քրեական դատավարության օրենսգրքով 135 հոդվածով դրանք նախատեսված են, թե որոնք են այդ հիմքերը. դրանք 5-ն են՝ անձի փախուստի դիմելու հավանականությունը, նախաքննությանը խոչընդոտելու հավանականությունը՝ ընդհուպ մինչև նախաքննությամբ անցնող անձանց վրա անօրինական ազդեցություն գործածելու եղանակով, նոր հանցանք կատարելու հավանականությունը և այլն։ Հիմա, ցանկացած դեպքում այդ հիմքերից որևէ մեկով կամ մի քանիսով խափանման միջոցի վերաբերյալ միջնորդություն ներկայացնելիս մարդու իրավունքի եվրոպական դատարանի մի շարք գործերով վճիռներում և նախադեպային իրավունքը մշակել է մի այնպիսի գործուն մեխանիզմ, համաձայն որի՝ այդ ամենը պետք է բխի գործի փաստական հանգամանքներից և թեպետ խափանման միջոցի վերաբերյալ միջնորդության մեջ նշված հիմքերը կանխատեսական բնույթ են կրում, որպես այդպիսին, ասենք քննիչը կարող է ենթադրել, որ անձը կարող է կատարել այս կամ այն արարքը, այնուհանդերձ պետք է բխեն գործի փաստական հանգամանքներից, ոչ թե

լինեն զուտ տեսական կամ քննիչի երևակայության արդյունք։ Տվյալ դեպքում ի՞նչ ենք մենք տեսնում։ Մենք տեսնում ենք, սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ 90% և ավելի դեպքերում գործի փաստական դեպքերում և հանգամանքներից բխող որևէ հիմք հիմնականում չի ներկայացվում, այսինքն՝ նշում են այն հիմքերը, որ առկա են 135 հոդվածում՝ առանց դրանք դիտարկելու գործի հանգամանքների համատեքստում։ Այսինքն՝ զուտ ձևականորեն նշում են այդ հիմքերը և ներկայացնում են դատարան միջնորդությունները և դատարանն էլ որպես կանոն, մուրճը խփում է և հաստատում քննիչի ներկայացրած միջնորդությունը։

Տեսեք, իրավական ավանդույթները գալիս են մեզ մոտ դեռևս խորհրդային ժամանակաշրջանից։ Ես խորհրդային ժամանակաշրջանի ծնունդ եմ, թեպետ այդ ժամանակ պրակտիկ իրավաբան չեմ եղել, սակայն սովորել եմ այդ տարիներին և այդ ժամանակահատվածում ես չեմ հիշում որևէ մի դեպք, ինձ հայտնի մի դեպք, երբ դատարանը կարող էր քննիչի ներկայացրած միջնորդությունը մերժեր։ Այսինքն՝ այս ամենը գալիսա խորհրդային ժամանակաշրջանից։ Ես կասեմ մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, որոնք կրկին գալիս են խորհրդային ժամանակների ավանդույթներից։ Հայաստանի Հանրապետությունում գործող իշխանությունը, համենայն դեպս, տեսանելի պայքար է մղում կոռուպցիայի դեմ, կաշառակերության դեմ, այդ թվում՝ նաև ներառյալ իրավապահ համակարգում։ Նախկինում և ներկայումս էլ այդ ավանդույթը գալիս է, շատ քննիչներ, երբ մենք նրանց հետ զրուցում ենք, իրականում այդ քննիչները գտնում են, վարույթն իրականացնող մարմինը գտնում է, որ անհրաժեշտ չէ միջնորդություն ներկայացնել դատարան՝ խափանման միջոց կալանք կիրառելու վերաբերյալ։ Գտնում են, որ անհրաժեշտ չէ միջնորդություն ներկայացնել, սակայն ստիպված իրենք ներկայացնում են։ Որտեղի՞ց է գալիս այդ ստիպվածը։ Ստիպվածը գալիս է այնտեղից, որ եթե քննիչը իր կամքով, թեպետ ինքը պրոցեսուալ անձ է, ինքը ինքնուրույն է և ինքն է որոշում տվյալ դեպքում խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը, սակայն եթե ինքը գործի փաստական հանգամանքներից ելնելով, իր ներքին համոզմունքով, իր խղճով խափանման միջոց

կալանք չներկայացնի դատարան, դա վերադասի մոտ կամ դատախազական համակարգի մոտ առաջացնում է ողջամիտ կասկածներ, որ քննիչն ունի շահագրգռվածություն, հետևաբար չի ներկայացնում խափանման միջոց կալանք։ Այսինքն՝ էս հարցը դիարկվում է կոռուպցիոն տեսանկյունից, որ եթե քննիչը չի ներկայացնում, հետևաբար շահագրգռվածա։ Այսինքն՝ չի դիտարկվում այն տեսանկյունից, որ իրականում նա կարող է նաև պարզապես չներկայացնել, որովհետև դրա անհրաժեշտությունը չի տեսնում։ Հիմա ինչ է կատարվում. էս վնասակար երևույթի պաբռչնի երևույթը մենք ունենք և որպեսզի ձերբազատվեն էդ խոսակցություններից, իրենց անձի հետ կապված, ընտրում են չարյաց փոքրագույնը, ներկայացնում են խափանման միջոց կալանքը, որպեսզի զուտ էդ խոսակցությունները իրենց նկատմամբ չտարածվի։ Որպեսզի չասեն շահագրգռված է, որպեսզի չասեն և այլն, և այլն, ինչ-որ բացասական երևույթներ կան։ Նույնը նաև դատախազությանն է վերաբերում, երբ որ խափանման միջոցը բողոքարկման ժամանակ դատարանա գալիս մեղադրողը։ Շատ դեպքերում, երբ մենք դատարանի դահլիճից դուրս բանավոր զրուցում ենք մեղադրողների հետ, բոլորն էլ ասում են, որ իրենք էլ են համամիտ, որ չպետք է անձի նկատմամբ ներկայացվի, պարզապես, եթե իրենք հակառակ կարծիքն ասեն իրենց վերադասին, իրենց վերաբերյալ խոսակցություններ կտարածվեն, հետևաբար չեն կարող այլ բան անել, քան որ պնդեն խափանման միջոցի վերաբերյալ իրենց կարծիքը։ Այդ վնասակար երևույթն է, որ ես միշտ տեսել եմ։

Ես արդեն իսկ ասեցի, որ հիմնականում դա պարզ շարադրանք է, ընդհանրապես գործի փաստական հանգամանքների համատեքստում չի դիտարկվում, ընդհանրապես։ Տեսեք, օրինակ, վերցնենք գրեթե բոլոր միջնորդությունների մեջ գրում են, որ ազատության մեջ մնալով՝ կարող է կատարել քրեական օրենսգրքում նախատեսված նոր արարք՝ նոր հանցագործություն։ Միջազգային նախադեպային իրավունքը հետևյալ միտքն է մշակել, թե որը կարող է համարվել այդ հիմքը, որի դեպքում քննիչը եզրակացնի, որ անձի ազատության մեջ մնալով կարող է կատարել համցագործություն։ Օրինակ՝ քրեական գործում առկա է

օպերատիվ տեղեկություն առայն, որ եթե անձը մնար ազատության մեջ, կկատարեր նաև ա՛յս, ա՛յս հանցանքները: Կա արդեն ողջամիտ կասկած: Ո՞րն է այդ հիմքը, որ ենթադրենք անձի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում անձն ունի բացասական հարաբերություններ մյուս կողմի հետ և առկա են տեղեկություններ առ այն, որ մինչ ձերբակալվելը անձը սպառնացել է, որ մի քանի օրից կամ մի քանի ժամից ես ձեր նկատմամբ էս արարքն եմ կատարելու: Դրանք ողջամիտ հիմքեր են: Կամ, օրինակ, փախուստի դիմելու հավանականության մասին: Ո՞րն է, օրինակի համար ասեմ, ցայտուն օրինակը, երբ անձի ձերբակալման պահին նրա մոտ հայտնաբերվում է ինքնաթիռի տոմս՝ Հայաստանի Հանրապետությունը լքելու: Կամ անձը ձերբակալվում է հենց Հայաստանի Հանրապետությունը լքելու պահին: Եթե շատ ցայտուն օրինակներ ասեմ, սրանք են այն դեպքերը, որի դեպքում քննիչը միանգամից կարող է ենթադրել, որ ազատության մեջ մնալու պարագայում, անձը կկատարի էդ բացասական արարքը կամ այդ բացասական վարքագիծը թույլ կտա: Նման որևէ բան մենք չենք տեսնում: Կամ, օրինակ, որ նշում են, ազատության մեջ մնալով՝ կազդի վկաների և տուժողների վրա: Տեսե՛ք, շատ հաճախ անձին չեն ձերբակալում անմիջականորեն հանցագործությունը կատարելուց հետո, այլ ձերբակալում են մեկ ամիս հետո, 15 օր հետո, 20 օր հետո: Այդ հիմքի նշելու ժամանակ, օինակ, ես կամ մեր գործընկերներից շատերը միշտ խնդրում են դատարանին, ասում են՝ տեսեք անձը մեկ ամիս մնացել է ազատության մեջ բացասական որևէ վարքագիծ թույլ չի տվել, քննիչը թող մատնանշի՝ ո՞րնա էն հիմքը, ցուցմունքը, կոնկրետ ապացույցը, որից բխելա նրա այդ ենթադրությունը: Հիմնականում, 99. 9% դեպքում նման որևէ ապացույց չի ներկայացվում, դատարանը կնիքում է քննիչի միջնորդությունը, ընդհանրական ձև է, բացարձակ անհատականացված չէ:

Կոնկրետ հիշում եմ մի դեպք, որ կոնկրետ դատարանի նիստը նախագահող դատավորի հետ միջադեպ տեղի ունեցավ, դրան միջամտեցին կարգադրիչները, քանի որ ակնհայտ անօրինական էր ընթանում գործընթացը, կալանավորման գործընթացը: Ընդհուպ միջնորդեցին կարգադրիչները, դատավորին ինքնաբացարկի

միջնորդություն ներկայացվեց և այլն։ Ամեն դեպքում նիստը տապալվեց, որովհետև ես դուրս եկա և չշարունակեցի խափանման միջոցին իմ մասնակցությունը։

Շրջադարձ նկատում եմ կոնկրետ դատավորների մասով։ ԸՆդհանուր միտում, որպես այդպիսին, չեմ նկատում։ Այսինքն՝ այն դատավորները, որոնք նախկինում մերժում էին միջնորդությունները կամ գրավ էին կիրառում, սկսել են ավելի շատ կիրառել գրավ կամ մերժել քննիչների միջնորդությունները, իսկ այն դատավորները, որոնք որ, ես էսպես ասեմ, հին սերնդի ներկայացուցիչներ են, ես իրենց մոտ ոչ մի փոփոխություն չեմ նկատում։ Սա անհատական է, որ ասեմ ընդհանուր միտում կա լավացման, դրականացման, չէ՞։

Տոկոսայինո՞վ, իմ պրակտիկայում միջնորդություններով փոխե՞լ, մոտ 10-15 տոկոս է։ Չէ՞, գրավներ կիրառում են, ես խոսում եմ այն մասին, որ ընդհանրապես մերժեն միջնորդությունը։ Օրինակ ես էսպես եմ ասում, եթե մերժում եք, մերժե՛ք, եթե չէ, ապա գրավը կիրառե՛ք։ Գրավ կիրառվում է, գրավի կիրառման միտումը ավելացել է։ Բայց ընդհանրապես որ մերժեն միջնորդությունը, մոտ 10-15 տոկոս։

Կալանքի միջնորդությունից Վերաքննիչ դատարանի աշխատանքը, ի տարբերություն առաջին ատյանի դատարանի, ես ավելի դրական եմ գնահատում և բավական շատ են, բեկանման դեպքերը՝ փոփոխման դեպքերը, բավական շատ են։ Սխալված չեմ լինի, եթե ասեմ՝ մոտ 50 տոկոս դեպքերում փոփոխումա։

Արդար դատաքննության իրավունքի խախտման փաստով, այո՛, խախտվում է։ Բայց եթե դռնբաց լիներ, շատ ավելի լավ կլիներ իրավունքի ապահովման տեսանկյունից։ Սակայն, ամեն դեպքում ես փաստաբան եմ, ես պետք է խոսեմ մեղադրյալի կամ կասկածյալի շահերից։ Այդ առումով, իհարկե, բարենպաստ և նպաստավոր կլիներ, եթե դռնբաց լիներ, սակայն, եթե օբյեկտիվ լինենք, ես կարծում եմ, որ համենայնդեպս, մեր մենթալիտետի պայմաններում՝ Հայաստանի Հանրապետության, էս ժամանակաշրջանում, դռնբաց անելը կվնասի քննության շահերին։ Անգամ, եթե մեղադրյալի շահերը վնասվում են, սակայն եթե կշեռքի նժարին

դնենք այդ շահերի հարաբերակցությունը, ես կարծում եմ, որ քննության շահը ավելի գերակա է, քանի որ չեմ ուզում ավելի բան ասեմ, գերակա է։

Չեմ կարծում, որ խափանման միջոց կալանավորումը մարդու իրավունքի ոտնահարում է, քանի որ նաև կոնվենցիայով նախատեսված է, ես այստեղ ոտնահարում չեմ տեսնում։ Կալանքը հիմնավոր միջնորդությունա, եթե իրականում օրենքի շրջանակներումա, օրենքի կողմից նախատեսվածա։ Ես չեմ տեսնում էդտեղ ոտնահարում։

Իրավական բազմաթիվ հետևանքներ են առաջանում։ Ձեր նախորդ հարցերից մեկի ժամանակ հնչեց, ես չպատասխանեցի, թե նախնական կալանքը պատժի հետևանքներ հետապնդու՞մ է, թե՞ ոչ։ Այո՛, ես գտնում եմ, որ, ըստ էության, այսօր Հայաստանի Հանրապետությունում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կալանքը, իրականում պատժի տարրեր պարունակում է։ Օրինակ, տեսեք, բոլորիս քաջ հայտնի Մանվել Գրիգորյանի դեպքի հետ կապված, ես չեմ պաշտպանը եղել, բնականաբար, ես կուզեմ կոնկրետ Մանվել Գրիգորյանի դեպքը ասել, անկախ նրանից, թե անձը ինչ է արել, ինչ չի արել, հիմնավորված է, հիմնավորված չի, կոնկրետ այդ անձի կալանավորումը իր մեջ պատժի տարրեր պարունակում է։ Քանի որ անձը հիվանդ է, անձը չի կարող պատիժը կրել իր հիվանդության, իր առողջական վիճակի պայմաններում, սակայն, այնուհանդերձ, կարծեք թե կար քաղաքական կամք, կամ քաղաքական որոշում, որ անձը պետք է մնա կալանքի տակ։ Ես նմանատիպ դեպք ունեցել եմ սպանության փորձի գործով, երբ նախաքննության ընթացքում հիմնավորվեց, որ անձն ունի պատժի կրմանը խոչընդոտող մի քանի հիվանդություն։ Երբ մենք ներկայացրինք առաջին ատյանի դատարան, ես կարող եմ նաև անուն տալ. Գագիկ Պողոսյանն էր դատավորը, հիշում եմ, մենք ներկայացրեցինք այդ տեղեկանքները, որ անձը ունի պատժի կրմանը խոչընդոտող հիվանդություն և ներկայումս չի կարող մնալ ազատազրկման պայմաններում, մեր կողմից ներկայացված խափանման միջոց գրավի միջնորդությունը դատավորը մերժեց։ Տեսեք՝

ինչ հիմնավորում տրվեց. ասումա ես ընդունում եմ, որ անձն ունի պատժի կրմանը խոչընդոտող հիվանդություն, բայց անձը միանգամից պատիժ դեռևս չի կրում: Անձը նախնական կալանքի տակ է, որը պատիժ չի, այսինքն՝ դա ձևական իմաստով, կարծեք թե, ճիշտ որոշում է, բայց բովանդակային իմաստով, ինչի՞ մասին է խոսքը: Այսինքն՝ բովանդակային իմաստով անձը կրում էր պատժատեսակը, որը պիտի կրեր դատավճռից հետո, այսինքն՝ ազատազրկման պայմաններում էր անձը գտնվում: Իհարկե, հետագայում բողոքարկեցինք վերաքննիչ դատարանը գրավ կիրառեց Մանուշակ Պետրոսյանի նախագահությամբ : Էդպես, լինում են էդպիսի բաներ:

Այլընտրանքային խափանման միջոցների՞ց, ես առավելագույնը գնամ, ինչքան կլինի, կլինի: Ես մինչև փաստաբան աշխատելը նաև բավական երկար ժամանակ՝ մոտ 18 տարի աշխատել եմ քննիչ, քննչականի պետ, դրանից հետո եմ ես եկել փաստաբան, փոխել եմ: Ես դրա համար ներքինից գիտեմ էդ խոհանոցը, թե ինչպես է կատարվում: Իրականում հիմնական պատճառը դա է, քանի որ այն ժամանակվանից սկսած, մենք ինքներս էլ տեսնում ենք, որ անհրաժեշտ չէ անձին ներկայացնել կալանքի, բայց զուտ էն բանի համար, որ հետագայում էլ խոսակցություններ չլինեն, զուտ հենց դրա համար ներկայացրել ենք: Քրեական դատավարության օրենսգրքում մենակ կալանքը չասեմ, երբ որ նշվում է, որ քննիչը ինքնուրույն անձ է, պրոցեսուալ անձ է, դա ձևական բնույթ է կրում: Ես միշտ ասել եմ. և՛ այն ժամանակ եմ ասել, և՛ հիմա եմ ասում, որ և՛ քննիչները, և՛ դատախազները միայն գրագիր են. կատարում են միայն իրենց վերադասի կամքը: Այսինքն՝ սևուսպիտակի վրա գրում են այն, ինչ վերադասը թելադրում է կամ ինչ վերադասի կամքն է: Կան եզակի քննիչներ, եզակի դատախազներ, որոնք շեղվում են այդ ուղուց, բայց նրանք երկար չեն աշխատում: Այսինքն՝ դա մի կուռ համակարգ է, որում քննիչը ոչ թե այն լիդերն է, կամ դատախազն այն լիդերն է, որին տրված է այդ իրավունքը, այլ նա մի փոքրիկ պտուտակ է: Այդպես էլ դիտարկում են: Եվ ինքն այլ ձևով չի կարա լինի: Եթե ինքը լինի այլ ձևով, ինքը քննիչ կամ դատախազ չի աշխատի:

Ես այլ առաջարկություն այլևս չունեմ. ես նորից եմ ասում՝ կարծում եմ, եթե լինի օրենքի սահմաններում ամեն ինչ, անգամ առանց տնային կալանքի, այսքանն էլ բավարար է, եթե ամեն ինչ լինի օրինական։ Մեր քրեական դատավարության օրենսգիրքը շատ լավն է, իրականում կան բացեր, կան փոփոխության ենթակա նորմեր, բայց ընդհանուր առմամբ շատ լավն է։ Իրականում հնարավոր է անձի իրավունքների շահերի պաշտպանությունը կնկրետ դատավարության սահմաններում։

Վարչական հսկողությո՞ւնը։ Դե օրենսդրությամբ նախատեսված է պրոբացիայի ծառայության վրա է դրված էդ պարտականությունը, ըտենց որ ասեմ՝ պատկերացնում եմ, թե այդ ծառայությունը ինչպես է լինելու, ճիշտն ասած չգիտեմ, բայց կարծում եմ, որ սենց մեխանիզմներ մշակում են դրա համար՝ ապահովելու էդ ամեն ինչը։ Կոնկրետ դրա համար տեխնիկական խնդիրներ էլ կան, կապված էդ սարքերի հետ, որոնք դեռևս նոր են ներդրվում։ Սարքեր, տեխնիկական սարքեր, որոնք ամրացնում են ձեռքի կամ ոտքի վրա, որոնք սահմանափակում են անձի տեղաշարժվելու հնարավորությունը և ազդանշան են տալիս, որ անձը լքել է սահմանված տարածքը։ Հիմնարկի վրա դրված կոնկրետ էդպիսի մեխանիզմներ Հայաստանի Հանրապետությունում չկա։ Մի երկու օր առաջ ինձնից հարցազրույց էին վերցնում՝ կապված հանցագործությունների աճի վերաբերյալ, կապված համաներումից հետո ինչպես է անձը նորից կատարում նույն հանցագործությունը, թե ինչպես է լինում... ես նույնը Ձեզ են ասում, որ էսօր Հայաստանի Հանրապետությունում անձի ինտեգրման կոնկրետ մեխանիզմներ չկան։ Այսինքն՝ անձը կրում է ազատազրկում երկար տարիներ, տեսեք՝ մեր մենթալիտետը ինչպես է, որ անձը գտնվեց ճաղերի հետևում, ընկերական շրջապատը կորցնում է, աշխատանքի մասին էլ չենք խոսում, շատ հաճախ նաև ընտանիքն է կորցնում. կինը բաժանվում է, երեխաները հեռանում են։ Ես օրիակ շատ եմ տեսել էդպիսի դեպքեր։ Անձը, ազատազրկման վայրից դուրս գալով, առերեսվում է իրականության հետ. ինքը իր նախկին բոլոր սոցիալական կապերը կորցնում է։ Այսինքն՝ ինքը մեն-մենակ է հայտնվել հասարակության մեջ։ Ինչ անի էդ անձը. չունի բնակարան, չունի գնալու

տեղ, չունի գումար և միջոց։ Չի մնում այլ ելք, քան կրկին հանցագործություն կատարել և կրկին արդեն իր բնական միջավայր վերադառնալ։ Էս առումով մեր պետությունը որևէ բան չի անում։ Այսինքն՝ չկան ինտեգրման մեխանիզմներ։ Նախկինում, էլի ես խորհրդային ժամանակամիջոցն ասեմ, եվրոպական փորձը չասեմ, գոնե էդ դրական բանը պետք է ներառվեր, ժառանգվեր, որ անձը անգամ 10 օր չէր կարող առանց աշխատանք մնար, քանի որ ազատազրկման վայրից դուրս էր գալիս, անմիջապես վերցվում էր, Ձեր ասած, վարչական հսկողության, անմիջապես անձը տեղավորվում էր աշխատանքի, ապահովում էր անգամ կացարանով, բնակարանով։ Այսինքն՝ հետզհետե սկսում էր ինտեգրվել հասարակությանը, որը մենք այսօր չունենք, ու նաև ես չեմ տեսնում մեխանիզմներ՝ դրան ուղղված, որևէ բան չի արվում։ Դրա համար պետք չի, էլի, ես այդ մասին նաև լրագրողին ասեցի, որ միայն այդ անձն է մեղավոր։ Հա, կան սուբյեկտիվ պատճառներ, կան հանցավոր մտադրություններ, հանցավոր միտումներ, բայց դրանք սուբյեկտիվ են, բա օբյեկտիվ պատճառնե՞րը։ Մենք ստեղծե՞լ ենք այդ անձի համար օբյեկտիվ պատճառներ։ Մենք ստեղծե՞լ ենք էդ անձի համար էդ օբյեկտիվ պատճառները, որ բա ինչի՞ էդ հանցագործությունը արեցիր։ Մենք՝ պետությունը, հասարակությունը։ Էսօր իշխանության արդարադատության կողմից ես անընդհատ հետևում եմ, որևէ ինտեգրման մեխանիզմ չի մշակվում։ Բա պահանջում եք՝ էս անձը կատարեց, բա ինչի՞ համար կատարեց էս հանցագործությունը։ Էսօր անձինք գնում են, արդեն ծաղրանքի առարկա է դրձել «Վարկս. am»-ի կամ բանկերի վրա հարձակումները։ Էսօր 8-15 տարի ազատազրկում նախատեսող հոդվածը անձինք լավ գիտեն, որ դրա համար նախատեսվում է ընդհուպ մինչև 15 տարի ազատազրկում։ Բայց էդ իմանալով հանդերձ՝ գնում են էդ արարքին։ Գնում են էդ արարքին, որովհետև էս հասարակության մեջ իրենց տեղը չունեն, չեն գտնում արդեն էդ տեղը։ Ստիպված գնում են էն տեղը, որտեղ գոնե մի կտոր հաց ունեն, գոնե քնելու տեղ ունենան։ Ստիպված են գնում այդ քայլին, ու ոչ մեկը հաշվի չի առնում էդ հանգամանքը։ Իհարկե ինտեգրման մասին եմ ասում։ Պետք է մշակվեն որոշակի ծրագրեր։ Անձը դուրս է գալիս. ինչ-որ միջոցներ պետք է ձեռնարկվեն, թեկուզ ներդրվեն բա անձը դուրս գա,

ի՞նչ անի էս հասարակության մեջ։ Ես ձեզ պրակտիկ օրինակ ասեմ. մարդը դուրսա եկել, կինը բաժանվել գնացելա, տունը կնոջ տուննա եղել, ինքը էդտեղ էլ չի կարողանում գնա, ընկերական շրջապատ չունի, աշխատանք չունի, դուրս էկավ մեն-մենակ ի՞նչ անի էդ մարդը։ Լավ, 5 օր մնա մեկի տանը, 5 օր մեկի, 5 օր եղբոր, քրոջ տանը, բա, լավ, հետո ի՞նչ անի էդ մարդը։ Էսօր ազատազրկված, կալանավորված մարդուն վերցնենք, պետական հիմնարկ չասեմ, մասնավոր ո՞ր ընկերությունը կվերցնի աշխատանքի։ Ոչ մեկը։ Դա էսօր խարանա անձի ճակատին, չէ՞, դրված։ Որ ինքը կալանավորված, ազատազրկվածա էղել։ Դա խարանա, դրա համար անմիջական պետության միջամտությունննա պետք մինչև էդ անձինք ինտեգրվեն։ Անձը իր միջոցներով, հնարավորություններով դժվար կարողանա ինտեգրվել հասարակությանը։

Անչափահասների հարցով և՛ օրենսդրական կարգավորում կա, և՛ քննչական մարմինները, դատախազությունն ունեն շրջաբերականներ, ունեն ցուցումներ ներքին, օրենսդրական ակտեր, որ անչափահասների դեպքում խափանման միջոց կալանավորումը ներկայացնեն որպես բացառիկ միջոց, ծայրահեղ դեպքում պետք է ներկայացվի։ Էդ առումով դրական միտում կա, հիմնականում քիչ են ներկայացնում անչափահասներին խափանման միջոց կալանավորման։ Կալանավորվածներ կան, բայց դրանք հիմնականում էն անձինք են, ովքեր ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ են կատարել, կան կալանավորման հիմքեր, որովհետև նաև դատարաններն են դրան ուշադրություն դարձնում, նաև տարիքը շատ մեծ նշանակություն ունի՝ 17 տարեկանա, 16ա, թե ինչքանա։

ՔԿՀ-ներում կոնկրետ չեմ կարող ասել բավարարո՞ւմ են պայմանները, թե՞ ոչ, կոնկրետ Արմավիր ՔԿՀ-ում հնարավորինս մոտեցրածա եվրոպական չափանիշներին, քրեակատարողական օրենսդրությանը։ Արմավիր՝ Չոբանքյարա, որ ասում են, դրա մասինա խոսքը, հնարավորինս մոտեցրածա, իսկ Նուբարաշեն քրեակատարողականը կամ նույն դատապարտյալների հիվանդանոցում, կամ,

չգիտեմ, Գորիս քրեակատարողական հիմնարկում վիճակը սարսափելի է: Անգամ չեմ ուզում մոտեցնեմ եվրոպական չափնիշներին կամ քրեակատարողական օրենսդրությանը մո՞տ է, թե՞ չէ: Եթե չեմ սխալվում, պետք է յուրաքանչյուր անձի հատկացված լինի 4 քառակուսի մետր, կամ 4, կամ 6 քմ: Անգամ մեկ քմ չի հատկացվում: Չնայած վերջին շրջանում համեմատաբար, նաև էս համաներումը ազդեց, համեմատաբար թեթևացել է քրեակատարողականների վիճակը: Այսինքն՝ էդ խցային պայմանները, զուտ էդ տարածքի առումով, թեթևացել է: Իսկ սանիտարա-հիգիենիկ առումով կամ մյուս առումներով սարսափելի վիճակ է: Ես անձամբ խուց չեմ մտել էս վերջին շրջանում, ես կարամ էդ մասին դատեմ կոնկրետ քննչական սենյակների վիճակից: Գիտե՞ք ինչ սարսափելի է. անգամ նստելու չկոտրված աթոռ չկա, կամ մաքուր աթոռ չկա: Մենք վախենում ենք, որ նստենք էդ աթոռների վրա, էնպիսի սանիտարա-հիգիենիկ վիճակ է: Մինչև սեղանի կամ աթոռի վրա թերթ չփռես, չես կարող գործողություն անես: Մեր փաստաբաններից ոմանք անգամ բարձրաձայնեցին վերջին ժամանակներս այդ մասին, որ պետք է լուծվի այդ հարցը: Ես նաև Ղարաբաղում եմ աշխատել, կոնկրետ անուն չեմ տա, էնտեղ Շուշիի քրեակատարողական հիմնարկնա, էդ մեկնա, այլ քրեակատարողական հիմնարկ չունեն: Էսպիսի խոսակցություն կար և՛ քննչականում, և՛ կալանավորների մոտ, որ հնարավորինս էնքան են վատացրել Շուշիի քրեակատարողական հիմնարկի վիճակը՝ պահման պայմանները այնքան ծայրահեղ վատացրել են, որ անձը մի անգամ էդտեղ գնալով, երկրորդ անգամ մահվան սպառնալիքով անգամ, չուզենա էդտեղ գնա: Դա էլ ինչ-որ պրոֆիլակտիկ միջոց էր դարձել /ծիծաղում է/, որ անձը երկրորդ անգամ էդտեղ չուզենա գնալ, որովհետև վիճակը սարսափելի է, անգամ եզրեր չկան, ինչ ասեմ: Սնունդը, վերջին ժամանակներս, նորմալ է դարձել, ինչքան որ ես խոսել եմ իմ պաշտպանյալների հետ, թեպետ գրեթե ոչ մեկը չի օգտվում դրանից: Հանձնուքները էնքան շատ են, սահմանափակում չկա էդ հանձնուքների, որ երևի 10 տոկոսը, 5 տոկոսը չի օգտվում էդ սնունդից, թեպետ տեսնում են, ասում են, որ գնալով լավացելա: Ես նման պաշտպանյալ չունեմ, որ հանձնուք չի ստանում, բայց ընդհանուր առմամբ

ասում են, որ լավացելա։ Առողջապահական առումով, ես նոր ասեցի, որ նաև դատապարտյալների հիվանդանոցումա վիճակը սարսափելի։ Եթե չեմ սխալվում, Նուբարաշենի համար ասեմ, որ կա ընդամենը մեկ բժիշկ, ստոմոտոլոգիական ծառայություններ ընդհանրապես չկան, ընդհանուր առմամբ վիճակը շատ վատա։ Ես հիմա պաշտպանյալ ունեմ, դատապարտյալների հիվանդանոցում է, որին ծնոտի ռեզեկցիա են արել, որն արել են քաղաքացիական հիվանդանոցում, քանի որ բժիշկ չկար, հիմա էլ վիճակը շատ ծանր է, քանի որ թարախային պրոցեսներ են, բորբոքայի պրոցեսներ և չկա որևէ մասնագետ, որ կարողանա էդ ամեն ինչը կատարի։ Այսինքն՝ անձը պետք է մնա այնքան, որ վիճակը այնքան ծանրանա, որ անհրաժեշտություն առաջանա տանել քաղաքացիական հիվանդանոց։ Չէ՛, սարսափելի է վիճակը։

Կալանավորումը կնպաստի բացահայտմանը, եթե լինի իրականում 135 հոդվածով նախատեսված հիմքեր, ես պետության տեսանկյունից եմ ասում։ Եթե անձը մնա ազատության մեջ և խմբի կազմակերպիչ է, ունի լծակներ ազդելու խմբի ազատության մեջ մնացած անդամների վրա, կնպաստի։ Եթե անձը պետք է դիմի փախուստի, պետք է կալանավորեն, որ չդիմ, կնպաստի։ Բայց հիմնականում նման դեպքերում, ընդհակառակը, հակառակ էֆեկտն է ունենում։ Անձը, հայտնվելով անազատության մեջ, դա էն առավելագույննա, ինչը քննչական մարմինը կարող է նրան առաջադրել մեղադրանքի սահմաններում։ Այսինքն՝ էն առավել վատությունը անումա քննչական մարմինը։ Դրանից հետո անձը ինչ ունի համագործակցելու քննչական մարմինների հետ կամ խոստովանելու իր կողմից կատարվածը։ Արդեն իսկ ինքը կալանքի տակ է։ Այսինքն՝ անձը գնումա հիմնականում նման պայմաններում իր պաշտպանության նպատակով ընտրում էր լռելը, ցուցմունքներ չտալը, նախաքննական մարմնի հետ չհամագործակցելը, ամբողջությամբ պարփակվում է իր հետ և իր մեջ և մինչև վերջ պաշտպանողական տակտիկա է ընտրում։ Թեպետ մի բան էլ ասեմ. էս վերջին շրջանում էդ էլ եմ նկատել և հենց հիմա մի ըտենց գործ ունեմ, որ անձի ձերբակալումից հետո, սա կարծես պրակտիկա է դառնում քննիչների մոտ, առաջարկություն է ներկայացվում խոստովանական ցուցմունքներ տալ,

հանցագործության գործիքները ներկայացնել և այլևս չտանել խափանման միջոց կալանավորման։ Այսինքն՝ ձերբակալումից ազատ արձակեն անձին։ Սա նկատել եմ վերջին շրջանում, որովհետև հենց հիմա էլ մի ընտենց գործ ունեմ, տառացիորեն 2 օր առաջ է մոտս եկել, դա էլ եմ նկատել, որ անձի հետ գնում են, կարծես թե, քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չի, բայց ընդհանուր առմամբ քննության շահերից բխող համագործակցություն է, երբ առաջարկություն է կատարվում, առաջարկությունը ընդունվում է, անձին չեն տանում կալանքի։ Լավ բան չէ, բնականաբար, լավ բան չէ, բայց մեր քրեական դատավարության նոր նախագիծը, որ նոր պետք է ընդունվի, կա համաձայնություն և համագործակցության ինստիտուտներ են նախատեսում, որ արդեն նոր քրեական դատավարության օրեսգրքով, կարծեք թե, նմանատիպ մի բան նախատեսվում է։ Սա նաև եվրոպական փորձ է, ամերիկյան փորձ է։ Էնտեղ գործերի մոտ 5-10 տոկոսն է գնում դատարան, քանի որ համագործակցության վարույթի ընթացքում հիմնականում էլ դատաքննության անհրաժեշտություն չի առաջանում։ Սա հիմա ներդրված չէ մեր քրեական դատավարության օրենսգրքում, բայց կարծեք թե կիրառվում է, էսպես ասեմ։ Չէ, կոռուպցիոն չկա, էս դեպքում, եթե համագործակցությունը ամբողջությամբ լինում է համաձայնեցված ընդհուպ մինչև վերադասի հետ։ Ո՞ր դեպքում են գնում, երբ տեսնում են, որ գործի հանգամանքները՝ անձի ձերբակալման, թույլ են, մեղադրական առումով թույլ են և դժվար է անձին քրեական պատասխանատվության ենթարկելը, անձին դատարան ուղարկելը, իրենք էսպիսի բան ունեն, չէ՞, որ մեղադրյալի ցուցմունքը, դա ապացույցների զարդն է, թագն ու պսակն է խոստովանական ցուցմունքը։ Էս եղանակով կորզում են էդ ցուցմունքը, ստանում են էդ ցուցմունքը։ Մի հատ էլ անձին փորձարարություն են անում, տանում են դեպքի վայրը զննություն են անում և այլն, ամրացնում են էդ հիմքը, որից հետո բաց են թողնում. էլ անձը իրենց պետք չի, էլ անձը իրենց ինչին է պետք։ Արդեն էն ինչ պետք էր իրենից ստանալու, ստացան։ Ո՞րն է էդտեղ բացասականը։ Բացասականը էն է, որ անձինք շատ դեպքերում համաձայնում են դրան, անգամ եթե իրականում այդ հանցագործությունը կատարած չեն լինում, կամ կատարած չեն լինում իրականում այն

չափով, ինչը իրենց մեղսագրվում է։ Էդ պահին իրենք գերադասում են մնան ազատության մեջ, քան գնան ենթարկվեն կալանքի՝ մտածելով, որ իրենք հետագայում չեն կարողանալու պայքարեն, կամ իրենց արդարացիությունը ապացուցել։

Գրավի կիրառումը էսպես, թե էնպես սուբյեկտիվ է, քանի որ այն հայեցողական է։ Էսպես ասեմ, լիազորությունը կարող է կիրառվել, կարող է չկիրառվել։ Գրավի կիրառելիության դեպքերը, ճիշտ է հիմա շատացել են, ավելացել են, որ ասեմ էդպես հավասար չափանիշներ, էսպես, թե էնպես, գրավը էն միջոցն է, որը չի էլ կարող ենթադրել հավասար պայմաններ կամ հավասար չափանիշներ, քանի որ դա կապված է անձի նյութական վիճակի հետ։ Եթե կապված է անձի նյութական վիճակի հետ, հետևաբար հավասար պայմանների մասին խոսելն իսկ ավելորդ է։ Հա, բոլորս էլ տեսնում ենք, որ այսօր կան անձինք, ովքեր ի վիճակի են վճարելու բավական մեծ X գումար և ազատ են արձակվում, իսկ անձինք, ովքեր կատարել են նմանատիպ հանցագործություն, բայց չունեն այդ գումարը, դուրս չեն գալիս ազատության մեջ։ Հա, որպես էդպիսին, սուբյեկտիվ է, բայց ի՞նչ անի էս դեպքում պետությունը կամ ի՞նչ անի էս դեպքում դատարանը. չէ՞ որ գրավը այն երաշխիքն է, որը կարող է ապահովել անձի որոշակի դրական վարքագիծը։ Դրա համար, հա, գրավը էսպես ասած, սուբյեկտիվ գործոն է, սուբյեկտիվ տարրեր է պարունակում, բայց ես չեմ կարծում, որ այլ եղանակ կա, չգիտեմ ինչ-որ օբյեկտիվ հավասար պայմաններ դրան առաջադրելու։ Եթե կապված է անձի նյութականի հետ, հավասարության մասին խոսելն անիմաստ է։ Գրավի չա՞փը, հենց օրենսդրությունը չի նախատեսել էդպիսի չափ. ամբողջությամբ թողվել է դատարանի հայեցողության վրա, բայց յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվի էդ անձի նյութական վիճակը, կապերը, ունեցվածքը և այլն։ Ես էս վերջում գրավի միջնորդություն էի ներկայացրել. անձը կատարել էր ծանր հանցագործություն, ես գրավի միջնորդություն էի ներկայացրել, 800.000 դրամ, դատարանը կիրառեց գրավ 1.000.000 դրամ, դատախազի կողմից վերաքննիչ բողոք բերվեց, բայց չբավարարվեց, գրավը մնաց։ Բայց էդ մեկ միլիոն դրամը ես գրավի միջնորդության մեջ ներկայացրել էի և ասել էի, որ կարող եմ ներկայացնել ցուցակով հավաքվել էր իրականում

էդ անձի հարազատների և բարեկամներ կողմից 5-10 հազար դրամով, անգամ 5.000-ով: Մարդ կար, որ հինգ հազար դրամ գումար էր տվել: Ես դատարանի ուշադրությունը դրա վրա հրավիրեցի, որ տեսեք, այս անձը էնպիսի վիճակի մեջա գտնվում, որ անգամ էդ մեկ միլիոն դրամը իր համար հսկայական գումարա: Ու հենց դա է ապահովելու նրա պատշաճ վարքագիծը, որովհետև անձը երբեք չի թույլ տա էնպիսի արարք, որ վտանգի էդ գումարը: Հենց դա էլ հաշվի առնվեց դատարանի կողմից, որովհետև ծանր հանցագործություն էր կատարել: Նմանատիպ հանցագործությունների դեպքում կարող է դատարանը 50 միլիոն դրամի դեպքում էլ ազատ չարձակի: Այսինքն՝ անձի անհատական գործոնները՝ ունեցվածքը, նյութական վիճակը, ամեն դեպքում պետք է հաշվի առնվի և ես կարծում եմ, որ դրանից պարտականությունը պաշտպանի վրա է դրված, որ ինքը կարողանա շատ հստակ միջնորդությամբ կարողանա ներկայացնել այդ վիճակը:

Ամեն բանից խոսեցինք: Ինձ համար ամենացավոտ խնդիրը էդ հանցագործությունների էդ նոր հանցագործությունների պրոֆիլակտիկան է: Ես շատ կցանկանամ, որ անձի հասարակությանը ինտեգրման մեխանիզմները մշակվեն, քանի որ դա ինձ համար այսօր ամենաառաջնային խնդիրն է, որովհետև տեսնում եմ, թե ինչ է կատարվում:

Օրենսդրական առաջարկություններ, նախագծեր ես պետա-իրավական հանձնաժողովին էլ եմ ուղարկել՝ կապված կոնկրետ հանցատեսակների հետ, չեմ ուզում շատ նեղ մասնագիտականը ներկայացնել: Կան որոշակի էդպիսի խնդիրներ: Հա, մի բան էլ ասեմ, սա վերջին ամենացայտունն էր. քննչական կոմիտեն օրենսդրական նախաձեռնությամբ է հանդես եկել, դիմել է արդարադատության նախարարությանը, որպեսզի արդարադատության նախարարությունն էլ իր հերթին մշակի այդ նախագիծը, ներկայացնի Ազգային ժողովին: Մշակում են հոդված, երբ անձի կողմից նմուշներ չտալը, փորձաքննությանը չմասնակցելը դիտարկվում է որպես բացասական հանգամանք, դիտարկվում է որպես բացասական վարքագիծ, այլև քրեական օրենսգրքով պատժվող արարք: Տեսեք, համաձայն այս հոդվածի, եթե անձին առաջարկում են՝ տա մեզի նմուշ, արյան նմուշ կամ մատնահետք, հիմա, եթե անձը հրաժարվի, դա իր իրավունքն է, նրա դատավարական իրավունքնա, կոնվեցիոն իրավունքնա: Անձին որևէ բան չէին անում: Էս դեպքում, համաձայն էս նոր մշակվող նախագծի, եթե անձը չի տալիս էդ նմուշները, դա հանդիսանում է ոչ միայն խոչընդոտում նախաքննությանը, այլև անձը դրա համար

ենթարկվում է քրեական պատասխանատվության բավական լուրջ հոդվածով, ինչը, իմ կարծիքով, լուրջ կոնվենցիոն իրավունքի խախտում է: Անձի կողմից նմուշներ չտալը, մյուս հանգամանքները պետք է դիտարկվեն լռելու իրավունքի համատեքստում: Դրանից դուրս չես կարող դիտարկել. լռելու իրավունքը միայն անձի չխոսելու իրավունքը չէ, դա անձի՝ նախաքննական մարմնի հետ չհամագործակցելու իրավունքն է: Ես, ի պատասխան դրան, պալատին ներկայացրել եմ իմ առարկությունները, օրենսդրական հիմնավորումները, խնդրել եմ, որպեսզի իր հերթին ներկայացվի արդարադատության նախարարություն: Կարծում եմ, որ պետք է որ չընդունվի: Որովհետև այսօր իրենց անգործությունը կամ փորձի պակասը փորձում են լրացնել անձի որոշակի պարտադրանք ներկայացնելով: Այսինքն, եթե քննիչը չի կարողանում բացահայտի հանցագործությունը, ինչի պիտի տուժի անձը՝ էդ մեղադրյալը, եթե էդ նմուշները չի տվել: Այլ միջոցներով փորձիր: Դա անձի իրավունքն է, անձի պաշտպանության մեջ է մտնում՝ ինքը ինչ կտրամադրի կամ ինչ չի տրամադրի: Նույն հաջողությամբ կարելի է անձին պարտադրել, ասել, այ եթե ցուցմունք չտաս, կգնաս էսքան կդատապարտվես: Սա բացասական միտում է, որպես այդպիսին: Դա քննիչների անփորձության հետ է կապված. ինչքան անփորձ են, միջոցները սուղ են հանցագործության բացահայտման, կարծես թե հանցագործության բացահայտումը փորձում են դնել մեղադրյալի վրա, պաշտպանության կողմի վրա:

Շնորհակալություն